Արձանագրություն N 3

ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԱԴ-26/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով
ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար արխիվի դարակաշարերի ձեռքբերման նպատակով կազմակերպված
ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԱԴ-26/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի
նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

07 սեպտեմբերի 2026թ.
ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Հովհաննիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Ղազարյան, Ա. Ազարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Բաբայան
Մասնակցում էին՝

1.Գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքելու վերաբերյալ.

1.1 Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 28.08.2026թ.-ին https://eauction.armeps.am/ համակարգի միջոցով ուղարկվել է ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԱԴ-26/1-1 ծածկագրով գնման պայմանագրի նախագիծը **«Վարդուհի Ավագյան» Ա\Ձ-ին**: **«Վարդուհի Ավագյան» Ա\Ձ**-ն սահմանված ժամկետում /5 աշխատանքային օրվա ընթացքում/ չի ներկայացրել պայմանագիրը https://eauction.armeps.am/ համակարգի միջոցով, ինչպես նաև չի ներկայացրել տուժանքի ձևով պայմանագրի և որակավորման ապահովումները:

Հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը, համաձայն որի. «Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից».

Որոշեց՝

1.2 Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների գնման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի
նախագահ՝ _____ Կարեն Հովհաննիսյան
անդամներ՝ _____ Սեդա Ղազարյան
_____ Արմեն Ազարյան
քարտուղար՝ _____ Նաիրա Բաբայան